Ավարտական հետազոտական

Աշխատանք

Թեմա՝ «Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը»

Հաստատություն՝ Թիվ 53 մանկապարտեզ

Դաստիարակ՝ Թորգոմյան Ալինա

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՈՒՆ.....3
Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը 4
Ամփոփում 15
Եզրակացություն.....17
Գրականության ցանկ 18

ՆԵՐԱԾՈՒԹՈՒՆ

Հայրենաճանաչողության ձևավորումը երեխայի կյանքի առաջին տարիներից հանդիսանում է դաստիարակության կարևոր բաղադրիչը: Նախադպրոցական տարիքից սկսած երեխայի կարևորագույն ձեռքբերումներից մեկը մայրենի լեզվի տիրապետումն է: Մայրենի լեզվի զարգացումը երեխայի անձի ձևավորման, ազգայի մշակույթի արժեքների յուրացման հիմնական տարրերից է, որը սերտորեն շաղկապված է մտավոր, բարոյական հայրենաճանաչողության զարգացման հետ:

Մայրենի լեզվի գործածությունը պետք է անխզելիորեն կապված լինի հայրենիքի ճանաչման հետ: Հայրենի երկրի, շրջապատի հետ ծանոթանալու ընթացքում, զարգանում է երեխայի խոսքը, որի օգնությամբ ճանաչում են, որի օգնությամբ ճանաչում են իրենց հայրենիքը, քաղաքը, մանկապարտեզը՝ զգում դրանց կարևորությունը իրենց կյանքում: Նրանք սովորում են մտածել, դատողություններ անել, հարցեր տալ և գտնել պատասխանները:

Հայրենաճանաչողության ձևավորումը երեխային զինում է տարրական գիտելիքներով՝ հայրենիքի, քաղաքի, իր փողոցի և տան մասին, առանց որի անհնար է երեխայի՝ որպես անհատի, լիարժեք կենսագործունեության առաջընթացը: Այն պետք է նպաստի հայրենասիրության ձևավորմանը, ծանոթացնի, սեր և հետաքրքրություն առաջացնի ազգային տոների նկատմամբ, երեխաներին հաղորդակից դարձնի ժողովրդական ավանդույթներին: Հայրենաճանաչողության դաստիարակության ձևավորման մեջ ներառված են նաև հայոց օրհներգի, զինանշանի, դրոշի մասին պատկորացումներն ու գիտելիքները:

Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը

Երեխաներն ունեն իրականությունն ընկալելու իրենց ուրույն ձևը: Նրանց աշխարհն անկրկնելի է և մեծապես տարբերվում է մեր՝ մեծերիս աշխարհից: Անտեղ երեխան ձևավորում է իր կերպարն ու կենսաձևը: Այդ տեսակետից կարևորվում է մանկավարժության դերը՝ միջավայրը որպես անձի (երեխայի) կազմավորման ու զարգացման անհրաժեշտ գործոն դիտելը և առավել կատարելագործված դարձնելու առումով:

Նախադպրոցական հասատատության խնդիրն է՝ կառուցել անհատի (երեխայի) հաղորդակցման, ճանաչողական, գեղագիտական կարողություններ:

- Դաստիարակել սեր և հոգատար վերաբերմունք հայրենի երկրի, հարազատ վայրերի (տուն, փողոց, մանկապարտեզ) նկատմամբ,
- Տալ տեղեկություն իր քաղաքի մասին,
- Ծանոթացնել պետական մի քանի տոներին (օր.՝ հունվարի 28, սեպտեմբեի 21),
- Երեխաներին հաղորդակից դարձնել ժողովրդական ավանդույթներին,
- Պատմել հայոց բանակի, զինվորիների մասին:

Երեխայի հայրենասիրության դաստիարակությունը մանկավարժական բարդ գործընթաց է: Այն հիմնված է երեխայի բարոյական զգացմունքների զարգացման վրա:

Հայրենասիրության դաստիարակումը՝ հայրենիքի հանդեպ սիրո դաստիարրակումն է, նրան նվիրվածությունը, նրա հանդեպ պատասխանատվությունն ու հպարտությունը:

Առանց հարգանքի հայրենիքի պատմության և մշակույթի, նրա պետական խորհրդանիշների նկատմամբ անհնար է զարգացնել հայի լիարժեք անհատականությունը:

Հայրենասիրության զարգացումը երեխաների մեջ ինքնին չի առաջանում: Սա երկարաժամկետ գործունեության արդյունք է՝ սկսած վաղ տարիքից:

Հայրենասիրությունը ձևավորվում է ընտանիքում, նախադպրոցական հաստատություններում՝ միջավայրի դաստիարակչական աշխատանքի ազդեցությամբ:

Նախադպրոցական հաստատությունների խնդիրն է երեխայի մեջ սերմանել սեր հայրենիքի նկատմամբ, ձևավորել հարգանք իրենց տան, մանկապարտեզի, քաղաքի նկատմամբ: Եվ որպեսզի սիրեն իրենց քաղաքը, պետք է նրանց ցույց տալ գրավիչ կողմից (ցույց տալ արդյունավետ ձևերը՝ էքսկուրսիա, դիտարկում, մատչելի պատմում, դիդակտիկ նյութեր): Պետք է օգնել երեխաներին գիտակցել իրենց, որպես հայրենիքի փոքրիկ անբաժանելի մաս:

Հայրենասիրության զարգացումը երեխայի մեջ սկսվում է ընտանիքի նկատմամբ վերաբերմունքից, ամենամոտ մարդկանց՝ մոր, հոր, քրոջ, եղբոր, տատի և պապի նկատմամբ: Սրանք այն արմատներն են, որոնք երեխային կապում են իր տան և անմիջական միջավայրի հետ:

Բոլորիս հայտնի է, որ Հայաստանն ունեցել է պատմականորեն ուժեղ կրթական համակարգ: Սակայն այսօր զարգացող հաստատությունն իր պահանջներն է առաջադրում այդ համակարգին:

Անհրաժեշտ է հնի ու նորի արդյունավետ համադրում: Նախադպրոցական հաստատություններում դա պետք է մատուցվի հնարավորինս պարզ և մատչելի, հիմք ընդունելով խոսքի զարգացման, կերպարվեստի, երաժշտության, էկոլոգիայի, ինչպես նաև խաղային գործունեությունը:

Բարոյահայրենասիրական զգացմունքների ձևավորման գործում նախադպրոցական երեխաների վրա ազդելու կարևորագույն միջոցներից մեկը՝ խաղն է:

Խաղը զարգացնում է երևակայությունը, գործողություններն ու զգացմունքները կամովին կատարելու ունակությունը:

Խաղի և պարապմունքնքների միաձուլմամբ պետք է ապահովվել ոչ միայն բարոյական, մտավոր և հայրենաճանաչողության դաստիարակումը, այլ նաև ինքնուրույն խաղային գործունությունը:

- Խաղային գործունեություն՝ դիդակտիկ խաղեր-նոր շենքի կառուցում:
- Էկոլոգիա- այս տարիքից է սկսվում բնապահպանական դաստիարակությունը երեխայի մեջ ձևավորել էկոլոգիական գիտակություն շրջակա միջավայրի, բնության նկատմամբ մարդասիրական վերաբերմունք: Դաստիարակել սեր և հոգատար վերաբերմունք բույսերի ու կենդանիների նկատմամբ: Բացատրել որ այդ ամենը (քար, ծառ, ճյուղ, ծաղիկ, կենդանի) միասին հենց իր հայրենիքին է, ուստի պետք է խնամել ու պահպանել:
- Կերպարվեստ – կերպարվեստի և ապլիկացիայի միջոցով ի հայտ են գալիս գեղագիտական արժեքներն ընկալելու և վերարտադրելու ունակությունները: Պարապմուքնի խնդիրը՝ ընդլայնել պատկերացումները հայ ժողովրդի արվեստի նկատմամբ, զարգացնել հետաքրքրասիրություն, երևակայություն, ձևավորել նկարելու հմտություններ՝ զարգացնելով մանր մոտորիկան:
- Երաժշտություն – երաժշտության պարապմուքների միջոցով առաջացնել սեր հայկական և ազգային մշակույթի նկատմամբ: Սովորեցնել ուշադիր լսել երաժշտական ստեղծագործությունը, ճանաչել երգը մեղեդուց, զարգացնել ռիթմի զսացողություն և շարժումների ռիթմիկ կատարման կարողություն: Երգը սկսել ու ավարտել միասին, կատարել երաժշտության բնույթին համապատասխան շարժումներ:

Սովորել խաղաղություն երգը.

Թո'ղ արևը միշտ շողա,

Թո'ղ կապույտ երկնքում

Միշտ աղավնին թևածի,

Թո'ղ ծիտիկը ծլվլա,

Թո'ղ առվակը կարկաչի,

Իսկ մեր երգը հավերժ հնչի,

Մենք ուզում ենք, մենք ուզում ենք, մենք ուզում ենք,

Անամպ երկինք, անամպ երկինք,

Պայծառ արև, պայծառ արև,

Խաղաղություն:

Երեխայի հայեցի դաստիարակությունը նպաստում է նաև ժողովրդական ավանդույթներն ու ազգային տոները, որոնք խորը հետք են թողնում երեխայի հիշողության և երևակայության վրա: Միջոցառումների նախապատրաստական աշխատանքներին երեխաների մեջ սերմանում են պատասխանատվություն, պարտաճանաչություն և ջանասիրություն:

Մանկապարտեղում նշում են անկախության օրը՝ զրույցի շնորհիվ, սերմանելով սեր հայ զինվորի նկատմամբ ով աշտպանում է նրանց:

Ուշադրություն են դարձնում նաև հայ եկեղեցու տոներին՝ Վարդավառ, Զատիկ, Տյառնընդառաջ, որոնք նպաստում են ազգային ոգու սերմանմանը և երեխաների հայեցի դաստիարակությանը:

Դաս

Թեմա – «Իմ հայրենիքը»

Տեսակը – Զրույց

Նպատակը - Երեխաներին պատկերացում տալ հայրենիքի, հարազատ բնակավայրի մասին, սովորեցնել ուշադիր լսել, ընկալել, պատասխանել հարցերին:

Դաստիարակել սեր դեպի հայրենիքը

Խումբը – Կրտսեր II

Տևողությունը – 15-20 րոպե

Անհրաժեշտ նյութեր - գլոբուս, Հայաստանի քարեզ, դրոշ, զինանշան, օրհներգի բառերը պատկերող նկարներ, Երևանի տեսարժան վայրերը պատկերող նկարներ:

Նախապատրաստական աշխատանք – Զբոսանք, շրջակա միջավայրի՝ փողոցի դիտում:

Ընթացքը - կենտրոնացնել երեխաների ուշադրությունը սկսել զրույցը. երեխաներ ի՞նչ կա հիմա իմ ձեռքում, ապա ուշադիր նայեք: Սա գլոբուս է երեխաներ: Գլոբուսը Երկիր մոլորակի մակետն է: Երկիր մոլորակի վրա են ապրում աշխարհի բոոր ժողովուրդները, այդ թվում և մենք: Եկեք գտնենք այն կետը, որտեղ գտնվում ենք մենք: Ահա, մենք ապրում ենք Հայաստանում, մենք հայ ենք, մեր հայրենիքը Հայաստանն է, մեր լեզուն հայրենն է: Մարդիկ կարող են տարիների ընթացքում տեղափոխվել երկրից երկիր, ապրել այնտեղ երկար, բայց հայրենիքը երբեք չեն կարող փոխել. այն միակն է մեր կյանքում, ինչպես մեր ծնողները՝ հայրիկն ու մայրիկը: Մեր հայրենիք Հայաստանը շատ թանկ է մեզ համար, իզուր չէ, որ նրան համեմատում ենք մայրիկի հետ, և ասում Մայր Հայաստան:

Ի դեպ Մայր Հայաստանի արձանը գտնվում է Հայաստանի մայրաքաղաք Երևանի բարձունքում: Ահա եկեք նայենք Հայաստանի քարտեզին: Տեսեք, այն իր տեսքով գեղանի աղջկա է նման: Այստեղ շատ քաղաքներ կան, գյուղեր, լեռներ ու գետեր: Ահա կենտրոնում մեր գեղեցկուհի Սևանա լիճն է, կարծում եմ բոլորդ էլ ամռանն այցելել եք այստեղ: Իսկ այստեղ բոլորիս շատ սիրելի մայրաքաղաք Երևանն է՝ իր գեղեցիկ տեսարժան վայրերով, պուրակներով, մանկական այգիներով:

Եկեք մի փոքր էքսկուրսիա կազմակերպենք, մայրաքաղաք Երևանի փողոցներով: Բոլորիդ հրավիրում ենք նստել զբոսաշրջիկ ավտոբուսն ու սկսել էքսկուրսիան (աթոռակները զույգ-զույգ դասավորել իրար հետևից աթոռի նման): Միանում է երաժշտությունը և սկսվում է մտովի էքսկուրսիան.

- Երեխաներ մենք անցնում ենք Երևանիմ փողոցներով: Ապա նայեք մեր մայրաքաղաքի շենքերը վարդագույն են: Գիտեք ինչու՞, որովհետև կառուցված են մեր հայրենիքի վարդագույն տուֆ քարից, դրա համար էլ Երևանն անվանում են վարդագույն գեղեցկուհի:

Ահա անցնում ենք Մաշտոցի պողոտայով: Մեսրոպ Մաշտոցը մի շատ բարի պապիկ էր, ով հեղինակ դարձավ հայոց տառերի: Նրա շնորհիվ մենք կարողանում ենք այսօր հայերեն գեղեցիկ ու հնչեղ լեզվով գրել ու կարդալ: Նրա արձանը գտնվում է Մատենադարանի շենքի դիմաց (ցույց տալ նկարը): Մատենադարան նշանակում է հին մատյանների պահոց-դարան, որտեղ պահպանվում են շատ հինավուրց գրքեր ու մատյաններ:

Ահա հասանք մայրաքաղաք Երևանի սիրտը՝ Հանրապետության հրապարակ: Այն հանրահայտ է իր փայլուն ազգային ոճով և կառուցվածքով, և իհարկե, յուրահատուկ ու գեղեցիկ երգող շատրվաններով:

Իսկ հիմա մեր առջևում Սասունցի Դավթի արձանն է: Սասունցի Դավիթը մեր քաջ, առասպելական հերոսն է, ով հաղթեց չար Մսրա Մելիքին և ազատեց իր ժողովրդին հալածանքից: Մինչև հիմա էլ նա սուրը ձեռքին կանգնած է բարձունքում և պաշտպանում է հայ ժողովրդին բոլոր չարիքներից:

Երեխաներ հայ ժողովուրդը դարեր ի վեր պայքարել է իր երկրի ազատության, անկախության համար: Նա միշտ երազել է իր երկինքը խաղաղ տեսնել, տունը՝ շեն, անբարը՝ հացով լի: Նա միշտ ստեղծել է հոյակերտ տաճարներ, գրել հանճարեղ հայրենասիրական ստեղծագործություններ, օպերաներ, բալետներ, ստեղծել համաշխարհային մեծության կտավներ:

Մենք բոլորս հպարտ ենք, որ հայ ենք, որովհետև հետնորդն ենք մեր հանճարեղ նախնիների՝ Հովհաննես Թումանյանի, Արամ Խաչատրյանի, Կոմիտաս վարդապետի, Մարշալ Բաղրամյանի, Մարտիրոս Սարյանի ու էլի շատ շատերի:

Երեխաներ, Հայաստանը մոյուս պետությունների նման ունի իր դրոշը, զինանշանն ու օրհներգը: Դրանք մեր պետության խորհրդանիշներն և կիրառվում են միայն հանդիսավոր և շատ կարևոր պետական տոների ժամանակ:

Երբ հնչում է Հայաստանի պետական օրհներգը, բոլորը հարգանքով ոտքի են կանգնում: Իսկ երբ ծածանվում է եռագույն դրոշը, բոլոր հայերը աշխարհի որ ծայրում էլ որ լինեն, հպարտ բարձրացնում են գլուխները և լավատեսությամբ ու հույսով նայում եռագույնին.

Արյունից ծորաց կտոր մը կարմիր,

Երկնքից պոկված կտոր մը կապույտ,

Հասուն հասկերի ցող ծիրանագույն,

Մեր հզոր դրոշ, հպարտ եռագույն:

Ոտանավորներ

1. Արարատի աչքի տակ,

Արագածին հարևան,

Կա գեղեցիկ մի քաղաք,

Մեր վարդագույն Երևան:

Ժպիտով են զարդարում,

Լույս մանուկները նրան,

Որ լինի միշտ աշխարհում,

Հզոր, հավերժ Երևան:

2. Հայոց լեզու – Դու հնատառ, մեսրոպատառ

Աղբյուրի պես ջինջ ու կայտառ,

Դու մոր նման միշտ տուն կանչող,

Մայր հողի պես միշտ կանաչող;

3. Հայոց լեզու

Դու այնպես կուռ, այնպես անբիծ,

Եվ ինչ լավ է հասել ես ինձ,

Թե կորչեիր հանկարծ անհետ

Մայրս ինչպես խոսեր ինձ հետ:

Դու հնատառ, մեսրոպատառ

Հազարագանձ ու սրբազան հայոց լեզու:

4. Հայաստանը

Իմ անունն է,

Ազգանունն է,

Ինձ ուժ տվող զորությունն է,

Իմ հինը և նորությունն է,

Իմ լեզուն է,

Այբուբենը,

Ուրիշ խոսքով՝ այն ամենը,

Որ կոչվում է հայրենի տուն...

5. Հայաստանս աղավնի՝

Մոլորակը կրծքի տակ,

Թևիր, հայոց աղավնի,

Չէ՞ որ լույս ես սպիտակ

Քո եռագույն թևերով՝

Դու հայության արեգակ:

HAPPY BIRTH

Ամփոփում

Ամփոփելով թեման, նշենք որ հայեցի դաստիարակելուց, սեր առաջացնելուց բացի ճանաչեցինք մեր հայրենիքը, մայրաքաղաք Երևանը, ինչպես նաև բառապաշարում ավելացրինք նոր, գեղեցիկ հայերեն բառեր ու բառակապակցություններ. անուշաբույր ծաղիկներ, քաղցրահամ մրգեր, արևաշող երկիր Հայաստան, գեղեցկուհի կապուտաչյա Սևան: Հասկացանք, որ հայը բարի և աշխատասեր է, ստեղծագործ և հյուրասեր, իսկ մանուկները ուրախ ու ժպտադեմ:

Եզրակացություն

Դաստիարակության արվեստն ունի այն առանձնահատկությունը, որ գրեթե բոլորին թվում է հասկանալի և հեշտ: Սակայն դա այդպես է այնքանով, որքանով անհատը տեսականորեն կամ գործնականորեն, քիչ է ծանոթ դրան:

Երեխայի դաստիարակությունը դժվարին ու պատասխանատու գործ է, և այս ասպարեզում մանրուքներ չկան:

Սիրել երեխային, չի նշանակում տեսնել միայն նրա արժանիքներն ու աչք փակել թերությունների վրա: Պետք է նրանց ընդունել ինչպիսին որ կան, և ձգտել փոխել, շտկել ու դաստիարակել:

Դեռ վաղ տարիքից պետք է դաստիարակել, սեր ու հարգանք սերմանել հայրենիքի նկատմամբ: Նախադպրոցական տարիքում դա կատարում ենք խաղի միջոցով, ամենօրյա պարապմունքների՝ կերպարվեսի, երաժշտության, էկոլոգիական դաստիարակության, բարեկիրթ վարքի դաստիարակության և խոսքի զարգացման միջոցով:

Հայրենաճանաչողության դաստիարակության մեծապես նպաստում է խոսքի զարգացման պարապմունքը, որն իր մեջ ներառում է զրույցներ, ոտանավորի ուսուցում և պատմություններ:

Գրականության ցանկ

1. 0-6 տարեկան երեխաների զարգացման չափորոշիչներ, ԿԳՆ, 2011թ.,
2. Գ. Մարտիրոսյան – Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում,
3. Հ. Միտոյան, Լ. Սմբատյան – Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար «Էդիթ Պրինտ», Եր., 2010թ.,
4. Մանկապարտեզի կրտսեր խմբի կրթական համալիր ծրագիր,
5. Ս. Սարուխանյան – Խաղի, երգի, պարի աշխարհ, «Լույս հրատարակչություն», 1996թ.,
6. Дошкольное воспитание. Москва, 2007г.,
7. З. А. Богатеева, Занятия аппликацией в детском саду.
8. И. Божович, о нравственном развитии у воспитании детей.